ԼՐԱՏՈՒ

«ՁԵԽԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԸ»՝ «ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԱՍԻՆ

Հայ պատմաբաններին, անշուշտ, կհետաքրքրի Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությանը նվիրված ժողովածուին տրված գնահատականը՝ չեխական գիտական մամուլում։ Արդի ժամանակաշրջանում, երբ թուրք կեղծարարներն ամեն կերպ ջանում են հերքել հայկական ցեղասպանության փաստը և մոլորության մեջ գցել միջազգային հասարակական կարծիքը, Պրագայում հրատարակվող «Československý časopis historický» հանդեսի էջերում (1983, № 4) «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում»[1] փաստաթղթերի ժողովածուի մասին տպագրված գրախոսականը ձեռք է բերում որոշակի նշանակություն։

Ի դեպ, սույն հանդեսն առաջին անգամ չէ, որ անդրադառնում է սովետահայ պատմաբանների աշխատությունների մեկնաբանմանը, չեխ գիտական հասարակայնությանը տեղեկացնելով պատմական գիտության նվաճումներին Սովետական Հայաստանում։ Հանդեսի էջերում լուսաբանվում են նաև արտասահմանյան հայագետների ուսումնասիրությունները[2]։

Ստորև ներկայացնում ենք հանդեսում տպագրված հաղորդումը՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանի խմբագրած փաստաթղթերի ժողովածուի մասին.

«Ժողովածուն ամփոփում է խմբագիր պրոֆ. Ներսիսյանի առաջաբանը, որտեղ տրված է անցյալ դարի 70-ական թվականների կեսերից մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտն ընկած ժամանակաշրջանին վերաբերող ցնցող փաստաթղթերի բնութագիրը։ Առաջին բաժինն ընդգրկում է կարմիր սուլթան Աբդուլ Համիդի օրոք Արևմտյան Հայաստանում սկիզբ առած հայկական կոտորածներին վերաբերող աղբյուրները։ Միայն XIX դարի 90-ական թվականներին սպանվել են ավելի քան 300 000 անզեն, խաղաղասեր հայեր, քանի որ համաձայն սուլթանի և նրա բարձր աստիճանավորների կարծիքի, որն արտահայտվեց Բեռլինի կոնգրեսից անմիջապես հետո, Հայկական հարցը լուծելու համար անհրաժեշտ էր ոչնչացնել հայ ժողովրդին։ Ժողովածուի երկրորդ մասը (էջ 187—594), որն ընդգրկում է 1909—1918 թթ. ժամանակաշրջանը, պարունակում է երիտթուրքերի կազմակերպած հայկական շարդերին և կանխամտածված ցեղասպանությանը վերաբերող ցնցող փաստաթղթեր. ցեղասպանություն, որի գագաթնակետը դարձան հայերի մասսայական տեղահանություններն ու սպանությունները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, սկսած 1915 թ.։ Հայկական գյուղերն ավերվեցին, տղամարդիկ, կանայք և երեխաները զինվորների հսկողությամբ դուրս բերվեցին մահվան երկար արշավների՝ դեպի ամայի տափաստանները, որտեղ... առանց հացի ու ջրի, հանձնվեցին բախտի քմահաճույքին։ Այդպես զոհվեցին հարյուր-հազարավոր հայեր, որոնց չէր հաջողվել ժամանակին խուսափել թուրք զինվորներից։ Այս իրադարձությունների ընթացքում, որոնք հետագայում դարձան գերմանական ֆաշիստների և ճապոնական ագրեսիվ ռազմամոլների կողմից համակենտրոնացման ճամբարներում ավելի լայն չափերով կիրառված ցեղասպանության սարսափելի նախերգանքը, երիտթուրքական ազգայնամոլական մոլուցքի հետևանքով տեղի ունեցան զոհերի անմարդկային տանջահարման հարյուր-հազարավոր դեպքեր։ Փաստաթղթերը վկայում են, որ մի շարք փորձարարական լաբորատորիաներում թուրք բժիշկներն օգտագործել են հայերին իբրև փորձակենդանիների, մասնավորապես բակտերիոլոգիական հետազոտությունների ժամանակ։ Կազմակերպված բարբարոսական սպանությունների հետևանքով ոչնչացվել են ավելի քան 1,5 միլիոն հայեր, Արևմտյան Հայաստանը վերածվել է ծխացող անապատի, ինչպես դա պատկերավոր ձևով ցույց է տվել Ֆ. Վերֆելը «Մուսա

---

[1] «Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов», под ред. М. Г. Нерсисяна, 2-е издание, Ереван, 1982.

[2] *Հիշատակելի են, օրինակ, հանդեսում տրպագրված երկու համառոտ հաղորդում՝ նվիրված ֆրանսիացի պատմաբան Ժ.-Մ. Կարզուի մենագրությանը (J.—M. Carzou, Un génocide exemplaire. Arménie 1915, Paris, 1975) և ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի խմբագրած «Հայ ժողովրդի պատմությանն» միհատորյակի առաջին թարգմանությանը (Տե՛ս* „Československý časopis historický" 1976, № 5; 1982, № 5):

յեռան բառուսուն օրը» վեպում, որը ներկայացնում է այն ժամանակների մթնոլորտը։ Հրատարակված փաստաթղթերն ուղեկցվում են ծանոթագրություններով և աղբյուրների ու գրականության ընդարձակ ցանկով։

Մ. Ներսիսյանի խմբագրած ժողովածուն (երկրորդ հրատարակությամբ, լրացված նոր փաստաթղթերով) ներկա դարաշրջանում, երբ ամբողջ մոլորակին սպառնում է միջուկային պատերազմի վտանգը, մի լուրջ նախազգուշացում է, մարդկությանն ուղղված կոչ՝ ուժեղացնելու պայքարը հանուն խաղաղության և խաղաղ գոյակցության՝ վերացնելու համար մեր մոլորակի վրա կախված այն վտանգը, որը նրան ոչնչացում է սպառնում։

Ժ. Պ.»։

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ